



ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի փողոց 17 հասցեում «Ջանգված» ՍՊԸ կողմից նախատեսվող Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն

2026թ. մայիս

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 17 ՀԱՍՑԵՈՒՄ «ՋԱՆԳՎԱԾ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Մ. Թևոսյան

Երևան, 2026թ.



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն և շրջակա միջավայր
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ՇԿ	Շինարարական կապալառու
ՍԿ	Սպասարկման (շահագործման) կապալառու
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՔԿ	Քաղաքաշինության կոմիտե
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԾԱԱ	Ծրագրի ազդակիր անձինք
ՖՄՌ	Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՇՆՆ	Շինարարական նորմեր և կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա



ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	5
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	5
3.	ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	7
3.1.	ՀՀ ազգային օրենսդրությունը	7
3.2.	Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահականական կոնվենցիաներին	11
3.3.	Վարչական (կազմակերպական) շրջանակը	11
4.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	20
5.1.	Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը	20
5.2.	Մեյամիկա և երկրաբանություն	21
5.3.	Հիդրոերկրաբանություն	24
5.4.	Կլիմա և օդային ավազան	24
5.5.	Մթնոլորտային օդ	27
5.6.	Աղմուկ և թրթռում	29
5.7.	Ջրային ռեսուրսներ	30
5.8.	Հողային ռեսուրսներ	31
5.10.	Կենսաբազմազանություն	33
5.10.1	Կենդանական և բուսական աշխարհ	33
5.11.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	35
5.12.	Պատմամշակութային հուշարձաններ	35
5.13.	Բնության հուշարձաններ	36
5.14.	Սոցիալական և մշակութային ռեսուրսներ	37
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ	42
6.1.	Նախատեսվող գործունեության բնութագիրը	42
6.2.	Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	44
6.3.	Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	57
7.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	57
7.1.	«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ	57
7.2.	Ծրագրի առավելությունները	58
8.	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ	60



8.1. Ջուր.....	60
8.2. Հողային աշխատանքներ.....	61
8.3. Օգտագործվող նյութեր.....	61
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	62
9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները	62
9.1.1. Օդային ավազան.....	62
9.1.2. Ջրային ավազան	66
9.1.3. Թափոնների կառավարում	67
9.1.4. Հողային ռեսուրսներ	68
9.1.5. Կենսաբազմազանություն	68
9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ	69
9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ	69
9.1.8. Արտակարգ իրավիճակներ.	69
9.1.9. Աղմուկ և թրթռում	70
9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում	70
9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	71
9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ.....	72
9.1.13. Մանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային նորմեր	74
9.1.14. Բարեկարգում և կանաչապատում	74
9.2. Սոցիալական ծրագիր.....	75
10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	75
11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	78
ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	95
ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	99



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող	«ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան, Գյուլիքեիյան Փ./7/11 Նոր Նորք 0076
Էլեկտրոնային հասցե	zangvac-ltd@mail.ru
Նախատեսվող գործունեության անվանումը	Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի 17 հասցեում Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցման աշխատանքներ (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով («Բ» կատեգորիա», Կետ 8, քաղաքաշինության բնագավառ, ենթակետ՝ ա))
Նախատեսվող գործունեության նպատակը	Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցում
Նախատեսվող գործունեության իրականացման վայրը	ՀՀ, ք. Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Նոյեմբերյան քաղաք, Շիրազի փողոց 17
ՇՄԱԳ հաշվետվության մշակող	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Պետական ռեգիստրի գրանցման համարը	282.110.841189
Գրանցման տարեթիվը	01.12.2015

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող գործունեության նպատակն է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի փողոց 17 հասցեում իրականացնել Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցում՝ նպատակ ունենալով ձևավորել ժամանակակից, բազմաֆունկցիոնալ և անվտանգ կրթական միջավայր, որը կհամապատասխանի մասնագիտական կրթության ոլորտում գործող նորմատիվ պահանջներին և կնպաստի տարածաշրջանում կրթական ենթակառուցվածքների զարգացմանը:



Ծրագրի իրականացումը նախատեսվում է համապատասխան հողամասում, որը գտնվում է Նոյեմբերյան քաղաքի ձևավորված բնակելի միջավայրում: Շինությունների տեղադիրքը և ծավալատարածական լուծումները մշակվել են՝ հաշվի առնելով տարածքի տեղագրական պայմանները, առկա կառուցապատման բնույթը, ինչպես նաև կրթական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանված նորմատիվ պահանջները և անվտանգության չափանիշները:

Նախատեսվող քոլեջի համալիրը ներառում է ուսումնական մասնաշենք, արհեստանոցային տարածքներ, գործնական ուսուցման ենթակառուցվածքներ (այդ թվում՝ «խելացի գույեր» և ջերմոցային տնտեսություն), ինչպես նաև օժանդակ նշանակության շինություններ՝ տրանսպորտային միջոցների պահպանման տարածք, կաթսայատուն, էլեկտրական ենթակայան և պահակակետ: Հիմնական ուսումնական մասնաշենքը նախագծված է որպես երկհարկանի շինություն՝ միաձույլ երկաթբետոնյա կարկասով, ապահովելով ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ֆունկցիոնալ տարածքները: Բացի այդ, նախատեսվում են համապատասխան լաբորատոր, գործնական և տեխնիկական տարածքներ, որոնք կնպաստեն մասնագիտական կրթության որակի բարձրացմանը և կիրառական հմտությունների զարգացմանը:

Ծրագրով նախատեսվում է նաև տարածքի համալիր բարեկարգում՝ ներառյալ ճանապարհների և անցուղիների կառուցում, ասֆալտապատում, բազալտե եզրաքարերի տեղադրում, ինչպես նաև կանաչապատում և հանգստի գոտիների ձևավորում՝ ապահովելով տարածքի անվտանգ և հարմարավետ օգտագործումը ուսանողների և անձնակազմի համար:

Ներկայումս նախատեսվող գործունեության իրականացման տարածքում առկա են հողատարածքներ և հնարավոր առանձին կառուցվածքներ, որոնք ենթակա են վերակազմակերպման՝ նախագծային լուծումներին համապատասխան: Տարածքը գտնվում է բնակելի միջավայրում, ինչի պայմաններում նախագծման փուլում հատուկ ուշադրություն է դարձվել շրջակա միջավայրի և բնակչության վրա հնարավոր ազդեցությունների նվազեցմանը, մասնավորապես՝ շինարարական աղմուկի, փոշու առաջացման, շինարարական տեխնիկայի տեղաշարժի և ժամանակավոր անհարմարությունների կառավարմանը:

Գործունեության իրականացման ընթացքում հարակից բնակելի շենքերի և տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 1-ում (ԲԿՊ):



3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014): Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական որոշող կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.),
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),



- «ՀՀ Հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօթերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002),
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Ջրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «ՀՀ Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Հողի օգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994),
- «Հանրային առողջապահության մասին» ՀՀ օրենքը (2024),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,
- ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,
- «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում,



➤ «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին մերկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում:

➤ «Մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշում,

➤ Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշում:

➤ «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-ն ու Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 07-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի նախագահի 15 հունվարի 2026թ.-ի հրաման,

➤ Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» N438-L հրաման,

➤ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրաման:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է



այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Առողջապահության նախարարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի



մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթոման թույլատրելի մակարդակները:

3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: ՀՀ իրավական տեղեկատվական համակարգում (<https://www.arlis.am/hy/>) ներկայացված են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը և պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության պատվիրատու է հանդիսանում՝ ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեն: «Զանգված» ՄՊԸ-ն հանդիսանում է սույն Ծրագրի Ձեռնարկող ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Գյուլիքեիյան Փ./7/11 Նոր Նորք 0076:

Մասնավորապես ՇՄԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

➤ Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:

➤ Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➤ Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի



պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

➤ Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

Շինարարական Կապալառու (ՇԿ)

Նախատեսվող քոլեջը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ներկայացված գործունեությունը նախատեսվում է իրականացնել է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի 17 հասցեում: Գործունեության համար հայցվող տարածքը գտնվում է Նոյեմբերյան քաղաքի ձևավորված բնակելի միջավայրում: Անմիջական հարևանությամբ առկա են բնակելի և հասարակական շենք-շինություններ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (սեփականության վկայականը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 2-ում):

Հողատարածքի մակերեսը և կադաստրային ծածկագրերը ներկայացված են ստորև.

Աղյուսակ 1: Տեղամասի տվյալները

N	Բնակավայր	Կադաստրային ծածկագիր	Մակերես (հա)
1	Նոյեմբերյան համայնք,	11-004-0001-0006	1.3414



	Նոյեմբերյան քաղաք, Շիրազի փողոց 17		
--	---------------------------------------	--	--

Տեղանքը գտնվում է Շիրազի փողոց 17 հասցեում: Նախատեսվող քոլեջի տեխնիկա-տնտեսական մանրամասները ներկայացված են սույն հաշվետվություն 6-րդ Գլխում և հաշվետվությանը կից ներկայացվող աշխատանքային նախագծում:

Ներկայացված տարածքը ըստ սեփականության իրավունքի պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

Նախատեսվող գործունեության նպատակային նշանակությունը.

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի փողոց 17 հասցեում Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցումը միտված է մասնագիտական կրթության ենթակառուցվածքների զարգացմանը, տարածաշրջանում կրթության որակի բարձրացմանը և համայնքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը: Նախագծի հիմնական նպատակային ուղղություններն են՝

- **Կրթական ենթակառուցվածքների զարգացում և արդիականացում՝** Նորակառույց քոլեջի համալիրը կապահովի ժամանակակից չափանիշներին համապատասխան ուսումնական և գործնական կրթության միջավայր՝ ներառելով ինչպես տեսական ուսուցման, այնպես էլ կիրառական հմտությունների զարգացման համար նախատեսված տարածքներ (արհեստանոցներ, ջերմոցային տնտեսություն, «խելացի գոմեր» և այլն):
- **Գործնական և կիրառական կրթության խթանում՝** Նախագծով նախատեսված արտադրական և ուսումնական ենթակառուցվածքները հնարավորություն կտան ուսանողներին ձեռք բերել իրական աշխատանքային հմտություններ՝ բարձրացնելով շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում և նպաստելով մասնագիտական կրթության արդյունավետությանը:
- **Անվտանգ և առողջ կրթական միջավայրի ստեղծում՝** Քոլեջի շենքերի նախագծման ընթացքում հաշվի են առնվել սեյսմակայունության, հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ և աշխատանքի անվտանգության պահանջները՝ ապահովելով ուսանողների և աշխատակազմի համար անվտանգ, առողջ և հարմարավետ պայմաններ:
- **Քաղաքաշինական և տարածքային զարգացման աջակցում՝** Քոլեջի կառուցումը և հարակից տարածքների բարեկարգումը կնպաստեն



Նոյեմբերյան քաղաքի տվյալ հատվածի քաղաքաշինական միջավայրի բարելավմանը՝ ձևավորելով կրթական և արտադրական նշանակության ժամանակակից համալիր, որը ներդաշնակորեն կմիանա շրջակա կառուցապատմանը:

- **Սոցիալական նշանակության բարձրացում՝** Նոր կրթական հաստատության ստեղծումը կնպաստի տարածաշրջանում մասնագիտական կրթության հասանելիության բարձրացմանը, երիտասարդների համար նոր կրթական հնարավորությունների ստեղծմանը և համայնքի մարդկային կապիտալի զարգացմանը:
- **Բնակչության կյանքի որակի բարելավում՝** Ժամանակակից կրթական և գործնական ուսուցման պայմանների ապահովումը դրական ազդեցություն կունենա երիտասարդների զբաղվածության մակարդակի վրա, կնպաստի տեղական աշխատուժի զարգացմանը և համայնքի սոցիալական բարեկեցության բարձրացմանը:
- **Տնտեսական ակտիվության խթանում և նոր աշխատատեղերի ստեղծում՝** Շինարարական աշխատանքների ընթացքում և քոլեջի հետագա շահագործման փուլում կստեղծվեն նոր աշխատատեղեր, իսկ կրթական և արտադրական ենթակառուցվածքների զարգացումը կնպաստի տարածաշրջանի տնտեսական ակտիվության աճին և կայուն զարգացմանը:

Տարածքին մոտ կան բնակելի շենք-շինություններ, որոնց վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ, ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում: Տարածքին ամենամոտ բնակելի շինությունը գտնվում է մոտ 30մ հեռավորության վրա (դեպի արևելք): Տարածքից մոտ 1.5կմ հեռավորության (դեպի արևմուտք) վրա է գտնվում Կողբ բնակավայրը: Տարածքից դեպի հարավ (մոտ 160-250մ հեռավորության վրա) ընկած հատվածում (Հ. Շիրազի փողոցի հարևանությամբ) կան բնակելի և հասարակական շենք-շինություններ, այդ թվում՝ բժշկական կենտրոններ, խանութներ և այլն (Նոյեմբերյան քաղաք): Տարածքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածներում կառուցապատված օբյեկտներ չկան (լանջային բնական միջավայր):

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր), ինչպես նաև պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ: Տարածքը գտնվում է Նոյեմբերյան քաղաքի ուրբանիզացված գոտում և երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված




կենդանատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

Տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագծերը և կադաստրային քարտեզը (կոորդինատներով) ներկայացված են ստորև.



Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման







Պատկեր 3: Կադաստրային քարտեզ





5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածը, որը կազմված է ալպիական լեռների ձևավորման գործընթացների արդյունքում առաջացած երիտասարդ ալիքավոր լեռնաշղթաներից, որը կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև հյուսիս-արևելքում տեղակայված հրաբխային կազմավորման զանգվածներից, որոնք կազմում են Հայկական հրաբխային բարձրավանդակի մի մասը (Արագած, Արա, Հատիս և Գեղաման են):

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Այն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) տարածաշրջանները: Մարզը հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիսում՝ Վրաստանին և արևելքում՝ Ադրբեջանին:

ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Ծովի մակերևույթից ամենացածր կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 380մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993մ: Մարզը գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Քուռ գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է:

Մարզի բնությունը գեղատեսիլ է: Ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառը անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, բնական ժառանգության անզուգական հուշարձաններով: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծվել է Դիլիջանի ազգային պարկը և Իջևանի անտառային այգին՝ դենդրոպարկը: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի ծավալման համար:

ՀՀ Տավուշի մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ,



դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծինի ու Մակարավանքի համալիրները, Տավուշի բերդը և այլն: Տավուշի մարզում է գտնվում ՀՀ ամենախոշոր աղյուսակերտ եկեղեցին՝ Կիրանցի վանքը:

Պատկեր 4: Գործունեության տարածքի ռեկիեֆր



5.2. Սեյսմիկա և երկրաբանություն


Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված գոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ-Զանգեզուրի և Միջին Արաքսյան



/Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 մետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքին մասնակցում են չորրորդական հասակի ապարներ, որոնք գտնվում են խորը հորիզոններում: Այս ապարների արտաքին շերտերը ծածկված են Դելյուվիալ- պրոլյուվիալ, Էլյուվիալ- դելյուվիալ առաջացումներով՝ ներկայացված կավային գրունտներով:

Պատկեր 5: Երկրկեղևի հիմնական խորքային բեկվածքները




Պատկեր 6: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարչության կայքից: $a=0.2g$, մինչև 3 բալ, $a=0.3g$, 3-ից 9 բալ, $a=0.4g$, 9 և ավելի բալ,



$a=0.5g$, կործանարար երկրաշարժ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՑՄԱԿ ԵՐԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ
SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA



Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ $a=300$ սմ/վրկ², $A=0.3g$:



Պատկեր 7: Մեյսմիկ գոտիների քարտեզ



5.3. Հիդրոերկրաբանություն

Տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Ուսումնասիրվող տարածքում մինչև 10.0մ փորված հոտատանցքներում գրունտային ջրեր չեն բացահայտվել: Տվյալ տարածքում ստորգետնյա ջրերի տեղամասերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15.0-20.0մ-ից խորը հորիզոններում:

Ուսումնասիրվող տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

5.4. Կլիմա և օդային ավազան

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:



Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Հուլիս օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը 23,1 °C-22,6 °C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 76% (ժ.15-ին): Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը՝ - 0.3 °C է: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Բագրատաշենի օդերևութաբանական կայանի դիտարկումների, ինչպես նաև քամու կլիմայական արժեքները՝ ըստ Իջևան քաղաքի օդերևութաբանական կայանի:

- Տարեկան միջին ջերմաստիճանը՝ 11.8 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 42°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -21°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 76%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա՝ 78%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա՝ 65%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 500մմ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 35 սանտիմետր:
- Քամու միջին ամսական արագությունը հունվար ամսվա համար՝ 2,8մ/վ է, հուլիս ամսվա համար՝ 1,9մ/վ:

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Բագրատաշեն» և «Իջևան» օդերևութաբանական դիտակետերից:

Աղյուսակ 2: Օդի միջին ջերմաստիճանը, °C



Բնակավայրի անվանումը	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Բագրատաշեն	0,3	1,7	5,6	11,6	16,5	20,1	23,1	22,6	18,3	12,4	6,7	2,2	11,8	-21	42

Աղյուսակ 3: Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Բագրատաշեն	78	77	74	73	77	74	71	72	77	81	82	80	76	67	54

Աղյուսակ 4: Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													
	ըստ ամիսների													Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		
Բագրատաշեն	22	26	41	52	76	76	46	34	35	38	34	20	500	
	18	30	29	36	56	84	82	55	39	39	42	23	84	

Աղյուսակ 5: Չյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը
1	2	3	4	5
Բագրատաշեն	-	13	70	-

Աղյուսակ 6: Քամի

Կրկնելիությունը. % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ		Հաշվարկային արագությունը



Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մեծ լքրտա յին	Ամիսներ	Հյուսիս ասյն (Հս)	Հյուսիս- Արև վեյյան (ՀսԱրբ)	Արև վեյյա ն (Արև)	Հարավ- Արև վեյյան (ՀվԱրբ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև մտյան (ՀվԱրմ)	Արև մտյան (Արմ)	Հյուսիս- Արև մտյան (ՀսԱրմ)	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արտառառում, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (□15մ/վ□ օրերի	, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում			
															20	50	100	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Իջևան	932,0	Հունվար	28	2	1	2	54	10	2	1	28	2,8	1,9	24	25	27	29	
			1,4	1,2	1,4	3,4	3,4	3,1	2,5	1,4								
		Ապրիլ	44	3	2	2	38	7	2	2	2	21						2,0
			1,9	1,8	1,4	1,9	2,0	2,1	2,1	1,9								
		Հուլիս	39	3	2	2	41	8	3	2	2	21						1,9
			2,0	1,9	1,4	1,6	1,2	1,5	1,4	2,1								
Հոկտեմբեր	36	3	2	2	46	8	1	2	2	27	1,8							
	1,6	1,6	1,0	1,5	1,7	2,1	1,8	1,5										

Աղյուսակ 7: Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
Իջևան	-	-	-

Աղյուսակ 8: Արևափայլի տևողություն (ժ) և ամսաց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Արևափայլի տրոհությունը և ամսաց արևի օրերի քանակը													Տարեկան
	Տևողությունը	ըստ ամիսների												
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Իջևան	ժ	118	120	136	139	172	211	205	201	175	137	120	110	1844
	օր	7	7	8	7	5	2	4	5	4	7	8	9	73

5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից՝ դիտակետերի միջոցով: ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշումը հաստատում է «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային



թույլատրելի նորմատիվները:

Ծրագրի իրականացման շրջանակներում՝ օդի որակի գնահատումը իրականացվելու է ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 611-L որոշման պահանջներին համապատասխան:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ըստ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում տեղադրված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, ինչը հրապարակված է (<http://meteomonitoring.am/page/1591>), ըստ որի օդի որակը բնութագրող որոշ պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է հետևյալ աղյուսակում (10.000 հոգուց պակաս բնակչություն ունեցող Նոյեմբերյան քաղաքի համար)՝

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Պատկեր 8: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 9: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Ընկալիչ	Ժամերը	Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը	
		dBL _{AEG}	dBL _{AMAX}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	07:00-23:00	55	70
	23:00-07:00	45	60

Աղյուսակ 10: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի



սահմանային մակարդակները դԲա-ով

Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ				
	Թեթև ֆիզիկական ծանրաբեռնվածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռնվածություն	1 աստիճանի ծանր աշխատանքի	2 աստիճանի ծանր աշխատանքի	3 աստիճանի ծանր աշխատանքի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները (հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է Նոյեմբերյան քաղաքի ուրբանիզացված հատվածում): Ելակետային իրավիճակում հայցվող տարածքում աղմուկի մակարդակը միջին է, քանի որ տեղանքը բավականին խիտ բնակեցված է: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են:

5.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետագայում՝ ՊՈԱԿ):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է



գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Մարզի տարածքով հոսում են բազմաթիվ մեծ և փոքր գետեր, որոնցից խոշորներն են Դեբեդ, Աղստև, Հախում և այլն): Գետերի միջին տարեկան հոսքը մոտ 17լսմ/վրկ է, որը կազմում է շուրջ 530 մլնլսմ ջրային պաշար: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուրգետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից:

Մարզում են գտնվում թվով հինգ ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն լսմ), Հախումի (12 մլն լսմ), Տավուշի (5 մլնլսմ), Այգեձորի (4 մլն լսմ և Խաշթառակի (0.12 մլն լսմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Ընդհանուր ծավալը կազմում է 66.12 մլն լսմ: Ջողազի ջրամբարը չի օգտագործվում սահմանային լինելու պատճառով, մնացած ջրամբարները ևս սահմանային են և մասամբ են օգտագործվում: Մարզում առկա են մի քանի փոքր բնական լճեր, որոնցից առավել հայտնի է Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճը:

Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Հյուսիսային ՋԿՏ-ը ներառում է Դեբեդի և Աղստևի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերը: 2024 թվականին Հյուսիսային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 38%-ում՝ 3-րդ դաս և 4-րդ դաս և 14%-ում՝ 5-րդ դաս:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում:

5.8. Հողային ռեսուրսներ

Տավուշի մարզում հիմնականում գերակշռում են լեռնամարզագետնային և



մարզագետնա- տափաստանային տիպի հողերը:

ՀՀ-ում հողի սանիտարական նորմերն ու կանոնները սահմանվում են առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՈՂԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ N 2.1.7.003-10 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N01-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ըստ այդ օրենքի հողերն ըստ քիմիական աղտոտվածության աստիճանի դասակարգվում են հողերում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) և այդ նյութերի ֆոնային մակարդակների հիման վրա, համաձայն որի պղնձի համար ՍԹԿ (սահմանային թույլատրելի կոնցենտրացիա) է համարվում 3մգ/կգ, նիկել 4 մգ/կգ, կապար 6 մգ/կգ, ցինկ 23 մգ/կգ, ֆտոր 2.8 մգ/կգ, քրոմ 6 մգ/կգ:

Հողի սանիտարական վիճակի գնահատման համար հսկողության ենթակա են բնակելի կառուցապատման, նախադպրոցական, դպրոցական կազմակերպությունների, բակային խաղահրապարակների տարածքները, առողջարարական նպատակներով, հանգստի համար նախատեսված տարածքները, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի կառույցների, այդ թվում՝ ջրառի սանիտարական պահպանման գոտիները:

Նոյեմբերյան բնակավայրում հողերում մետաղների պարունակության հետազոտություններ չեն իրականացվել:

Հողերի էրոզվածության աստիճանը VI-րդ կարգի է՝ 70%-ից ավելի:

Պատկեր 8. Հողերի էրոզվածությունը



5.10. Կենսաբազմազանություն

5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ

Ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, բնական ժառանգության անզուգական հուշարձաններով: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին՝ (դենդրոպարկը):

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ ճիշտ կառավարման պատճառով առաջանում է էրոզիա, որոշ հատվածներում առաջ են եկել դեգրադացման խնդիրներ, որի կանխարգելման նպատակով վերջին տարիներին իրականացվել են որոշակի աշխատանքներ:

Մարզում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը, շուրջ 33765 հա մակերեսով: «Դիլիջան» ազգային պարկում առանձնացվել են չորս արգելոցային գոտի, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2277 հա, համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N204-Ն որոշման: Մարզում է գտնվում նաև Կենու,



Արջատիլենու, Իջևանի, և Գանձաքարի արգելավայրերը: Մարզի տարածքում գործում է «Հայանտառ» ՊՈԱԿ –ի՝ Սևքարի, Իջևանի, Նոյեմբերյանի և Արծվաբերդի դուստր անտառտնտեսությունները:

Մարզի տարածքում վայրի կենդանիներից դեռևս պահպանվում են արջ, այծյամ, եղջերու, վայրի խոզ, մացառախոզ, շնագայլ, գայլ, փոքր սող, կզաքիս, վայրի կատու, եղեգնակատու, լուսան, որոնցից այծյամի և եղջերուի պահպանման և զարգացման նպատակով Դիլիջանի Ազգային պարկի տարածքում 2016թ-ից մեկնարկել է ծրագիր:

Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են անտառային էկոհամակարգերի գերշահագործման հետ, որի պատճառով խաթարվել է անտառի ինքնավերականգնման ունակությունը և դեգրադացվել են անտառային էկոհամակարգերը: Դիլիջանի արգելոցը զբաղեցնում է Աղստև գետի վերին հոսանքի ավազանը՝ Հալաբի արևելյան, Միափորիի հյուսիսարևմտյան և Արեգունի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերը, մոտ 24000 հեկտար տարածություն:

Անտառներն առաջին կարգի են: Ունեն հողապաշտպան, ջրակարգավորիչ, գիտական և տնտեսական նշանակություն: Ազգային պարկի բուսաշխարհն ընդգրկում է 902 տեսակ ծաղկավոր բույսեր, որոնցից 40-ը՝ հազվագյուտ: 29 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենի, կաղնի, բոխի, լորենի, հացենի, թեղի, սոճի և գիհի: Դիլիջանի արգելոցում են երրորդական դարաշրջանի մնացորդ՝ կարմրածառի (մահիկի) պուրակները, որոնցից Աղնաբաթինը (Գետիկի ավազան) ամենախոշորն է Անդրկովկասում: Դեղատուներից լայն տարածում ունեն սրոհունդի, դաղձի, ուրցի, ուրցադաղձի, սննդային բույսերից՝ ավելուկի, սիբեիի, բալդրդանի, կերային խոտաբույսերից՝ երեքնուկի, կորնգանի, գեղազարդային բույսերից՝ խոլորձի, հիրիկի բազմաթիվ տեսակներ:

Արգելոցն ունի հարուստ կենդանական աշխարհ: Հանդիպում են գորշ արջ, այծյամ, գորշուկ, քարակզաքիսը (*M. foina nehringi*), անտառային կատու, աղվես, լուսան, պարսկական սկյուռ, ինչպես նաև բազմաթիվ սողուններ ու երկկենցաղներ: Կան նաև բազմաթիվ թռչուններ՝ կովկասյան ցախաքլոր, լեռնային հնդկահավ, գորշ կաքավ, անտառային կտցար, կեռնեխ և աղավնիներ: Կլիմայավարժեցվում են ուսսուրական բծավոր եղջերուն, ազնվացեղ եղջերուն և վայրի խոզը:

Իջևանի արգելավայր, արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Տավուշի մարզում: Կազմավորվել է 1971-ին, ունի 5908 հեկտար տարածք: Գտնվում է Աղստև գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի լանջերին՝ ծովի մակարդակից 900-2100 մ բարձրություններում: Ստեղծվել է՝ անտառային լանդշաֆտների և կենդանիների (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան



մայրեհավ) պահպանության նպատակով:

Ըստ հետազոտությունների, Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքներում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրացնված բուսատեսակներ և կենդանատեսակներ:

Ազդեցությունը կանխատեսվում է որպես ոչ էական, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ տարածքը երկար տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին ազդեցության:

5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը չի ընկնում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ: Ներկայացված տարածքին ամենամոտը «Իջևան» պետական արգելավայրն է, որը գտնվում է ավելի քան 23կմ հեռավորության վրա:

Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցություն որևէ ԲՀՊՏ-ի վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է մոտկա ԲՀՊՏ-ից ավելի քան 23կմ հեռավորության վրա:

5.12. Պատմամշակութային հուշարձաններ

Հայաստանի Տավուշի մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծնի ու Մակարավանքի համալիրները, Տավուշի բերդը և այլն: Հայտնի են նաև Ջուխտակ վանքերը, Մաթոսավանքը, Առաքելոց եկեղեցին, Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Սրանոց կամուրջը, Սորո Ձորո վանքը, Լաստիվերի անապատը, Գոշի լիճը և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության 30 դեկտեմբերի 2004 թվականի N 1929-Ն որոշման՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման, Նոյեմբերյան քաղաքում, կան 11 պատմամշակութային հուշարձաններ (մասնավորապես՝ ամրոցներ, դամբարանադաշտ, խաչքարեր և այլն), որոնից սակայն ոչ մեկը չի կարող ենթարկվել ազդեցության, քանի որ դրանք գտնվում են Ծրագրի համար ներկայացված տեղամասից բավականին մեծ հեռավորությունների վրա:



5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման և ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 473-Ն որոշման՝ Տավուշի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 11: Տավուշի մարզի բնության հուշարձանների ցանկը

Երկրաբանական

Կովասարի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարազաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարազաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարազաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքի վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարազաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք
«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին
«Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա
«Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին, Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում
«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
«Օձաքար» լեռ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ (ուղիղ գծով 1 կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն գրունտային ավտոճանապարհի աջ կողմում՝ Պառավաքար լեռնագագաթից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթումբ լեռնագագաթից մոտ 3 կմ հյուսիս-արևելք

Զրանկրաբանական



Առկա չեն

Զրագրական

Առկա չեն

Բնապատմական

Առկա չեն

Կենսաբանական՝

«Զորականի սոսի»	Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում
«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք
«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, Սարիգյուղ գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ
«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս-արևմուտք՝ Սառնաջուր գետի ձախ ափին
«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն
«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք
«Զոնջոլկուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտք

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում և չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում:

5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում:

Տավուշի մարզ

Տարածքը՝ 2704 կմ²;

Համայնքներ,

2025

թվականի

տարեսկզբի

դրությամբ՝

4



(https://armstat.am/file/Map/MARZ_01.pdf):

Բնակչության թվաքանակը 2025թ. տարեսկզբի դրությամբ՝ 117,7 հազ. մարդ:

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Այն հարավ-արևելքում և հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ Լոռու մարզին, իսկ պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին: Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ):

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

2024թ. Տավուշի մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են

- արդյունաբերություն - 1.3 %,
- գյուղատնտեսություն - 5.0 %,
- շինարարություն - 3.8 %,
- մանրածախ առևտուր - 2.3 %,
- ծառայություններ - 0.9 %:

Մարզը ՀՀ վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ոլորտներ են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Վերջին տարիներին հիմնվել են պտղատու այգիներ, որոնց մեջ գերակշռում են թուզն ու արքայանարինջը: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության առաջատար ոլորտը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդի արդյունաբերությունը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում ոգելից խմիչքներ՝ կոնյակ, գինի, օղի, զարեջուր, պահածոներ, հանքային ջուր, քարե և տեքստիլ արտադրատեսակներ:



Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի–Երևան գազատարը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ավտոլ անցնում է Երևան–Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հասվածը: Տավուշի մարզում են գտնվում Այրում-Ջիլիգայի և Բագրատաշենի մաքսակետերը:

Մարզկենտրոն **Իջևան քաղաքը** (2025թ. տարեսկզբին՝ 19.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Այն մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցն է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ սննդամթերքի և գինու արտադրությունը): Զարգացում է ապրում քարի մշակումը և տեքստիլ արտադրությունը: Քաղաքում արտադրվող ոգելից խմիչքների, քարե և տեքստիլ արտադրատեսակների գերակշիռ մասն իրացվում է արտաքին շուկաներում:

Նոյեմբերյան քաղաքի (2025թ. տարեսկզբին՝ 4.5 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 187 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է: Վերջին տարիներին զարգացում է ապրում նաև քարի արտադրությունը:

Աղյուսակ 12: Տավուշի մարզի հիմնական վիճակագրական տվյալները, 2020-2024թթ

	2020	2021	2022	2023	2024
Մարզի մշտական բնակչության թվաքանակը տարեվերջի դրությամբ, 1 000 մարդ	120.5	119.7	115.0	116.5	117.7
այդ թվում՝ քաղաքային	50.6	49.9	47.5	48.7	49.2
գյուղական	69.9	69.8	67.5	67.8	68.5
Բնական աճի/նվազման ընդհանուր գործակիցը, 1 000 բնակչի հաշվով	- 3.5	- 2.7	1.1	2.1	1.3
Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ	115 477.8	132 542.8	136 745.0	151 509.5	...
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	31 070.4	33 187.2	38 634.0	38 581.2	40 067.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	35.9	45.6	46.0	47.0	47.9
Շինարարության ծավալը,	13 066.9	10 499.1	17 819.8	20 021.0	30 927.6



ընթացիկ գներով մլն. դրամ					
Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ	3.6	3.1	3.8	4.9	5.0
Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	3.9	6.0	17.4	28.7	33.0
Կապի ծառայությունների հատվածը, ընթացիկ գներով, մլն. դրամ	429.3	958.5	489.6	501.5	468.8
Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	30 598.5	30 598.5	41 219.3	43 250.1	49 291.0
Ծառայությունների ծավալը, մլն. Դրամ	16 137.2	17 053.8	24 311.3	29 350.0	35 148.4
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	101.2	107.1	107.7	100.7	100.3
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	99.0	101.7	110.1	99.1	99.4
Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ	112.6	106.6	96.2	84.9	86.7
որից՝ զբաղվածներ	43.3	44.5	39.9	40.0	38.9
գործազուրկներ	13.4	8.9	10.4	12.2	15.5
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	122 894	125 896	147 227	199 260	156 787
Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ	20 378.1	47 062.3	51 927.5	20 908.8	17 590.1
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը	27	27	28	27	27
Գրանցված հանցագործությունների քանակը	960	1 021	897	1 403	1 488
Կենսաթոշակատուների թվաքանակը տարեվերջին, մարդ	20 574	20 225	20 022	19 966	20 379
Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի	4 893	4 606	4 018	3 654	3 115



դրությամբ					
Նախադպրոցական հաստատությունների քանակը	67	69	70	70	73
Հանրակրթական դպրոցների քանակը	82	82	82	82	82
Գործող թանգարանների քանակը	3	3	3	3	3
Գրադարանների քանակը	60	60	59	59	62
Մարզական կազմակերպությունների քանակը	4	4	4	4	6

Նոյեմբերյան համայնք

Նոյեմբերյան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան մասում, ընդգրկում է ՀՀ Տավուշի մարզի հյուսիսիարևելյան հատվածը և մի փոքր շերտով մխրճվում է մարզի տարածքի կենտրոնական հատվածի մեջ:

Համայնքի բնակավայրերը հիմնականում տեղակայված են դեպի լեռները գնացող խառն անտառների ստորին եզրագծի վրա: Համայնքի ամբողջ տարածքի գրեթե կեսը՝ 16010.42 հա, անտառներ են:

Նոյեմբերյան համայնքը գտնվում է Տավուշի մարզի հյուսիսային մասում 800-900 մ բարձրության վրա, Ոսկեպարի լեռնաշղթայի ստորին մասում, Կողբ գետի աջ վտակի հովտում: Համայնքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 33886.81 կմ:

Համայնքը տեղակայված է Երևանից՝ 198 կմ, Թբիլիսիից 98 կմ և մոտակա Այրում կայարանից՝ 22 կմ հեռավորության վրա: Արտաքին աշխարհի հետ համայնքը կապված է Երևան-Թբիլիսի երկաթուղով և Երևան-Ալավերդի-Թբիլիսի և Երևան-Իջևան-Թբիլիսի ավտոճանապարհներով:

Ռելիեֆը բարդ է, լանջերը թեք են, կտրտված, տարածքի կենտրոնական մասը հարթ է: Սեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.2-0.3 ց-ով: Մակերևույթի թեքության անկյունը տատանվում է 3-25 °-ի սահմաններում:

Տարածքին հատուկ է տաք, չափավոր խոնավ, բարեխառն կլիման, մեղմ ձմեռով: Միջին տարեկան ջերմաստիճանը՝ 10.4 օC: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 541 մմ: Չյան ծածկույթի հաստությունը ձմռանը տատանվում է 10-12 սմ սահմաններում: Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է շուրջ 2100 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է շուրջ 45 կկալ/սմ²: Քամու միջին տարեկան արագությունը՝ 1.8 մ/վրկ: Ամբողջ տարվա ընթացքում գերակշռում են



հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան քամիները:

Կլիմայական պայմաններով և գեղատեսիլ լանդշաֆտով տարածաշրջանը համարվում է Հայաստանի գեղեցիկ վայրերից մեկը և վաղուց ի վեր ունի հրաշալի ամառանոցային վայրի համբավ: Տարածաշրջանը բնութագրվում է որպես կլիմայական կուրորտային գոտի: Համայնքի տարածքում մայիս ամսից մինչև հոկտեմբեր գերակշռում են կոմֆորտային պայմաններ կլիմայաբուժության համար:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող գործունեության շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Շիրազի փողոց 17 հասցեում նախատեսվում է Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցում: Քոլեջի համալիրը նախագծված է որպես միջին մասնագիտական կրթության նշանակության օբյեկտ և նախատեսված է կրթական ծրագրերի իրականացման համար՝ ապահովելով ժամանակակից ուսումնական, արտադրական և գործնական ուսուցման միջավայր:

Քոլեջի համալիրի հատակագծային և ծավալատարածական լուծումները մշակված են՝ ապահովելու տարբեր ֆունկցիոնալ գոտիների՝ ուսումնական, արտադրական, վարչական և օժանդակ տարածքների արդյունավետ փոխկապակցվածություն: Շինությունների տեղադրությունը ընտրված է՝ հաշվի առնելով տարածքի տեղագրական առանձնահատկությունները, առկա կառուցապատման բնույթը, ինչպես նաև կրթական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանված նորմատիվ պահանջները:

Նախագծով նախատեսվում է բազմաֆունկցիոնալ համալիր, որը ներառում է երկհարկանի ուսումնական մասնաշենք, ինչպես նաև առանձին մասնաշենքեր՝ արհեստանոցների, գործնական ուսուցման ենթակառուցվածքների (այդ թվում՝ ջերմոցային տնտեսություն և «խելացի գոմեր»), տրանսպորտային միջոցների պահպանման տարածքի, կաթսայատան, էլեկտրական ենթակայանի և պահակակետի համար: Ուսումնական մասնաշենքում նախատեսված են լսարաններ, լաբորատոր և մասնագիտական սենյակներ, վարչական և ուսուցչական տարածքներ, ինչպես նաև ուսումնական գործընթացը սպասարկող օժանդակ սենյակներ:

Շենքերի հիմնական մուտքերը և էվակուացիոն ելքերը նախագծված են գործող հրդեհային անվտանգության և տարհանման նորմերին համապատասխան: Նախատեսված են նաև հարմարեցված մուտքեր և հաղորդակցման տարրեր՝ շարժման



սահմանափակումներ ունեցող անձանց համար, ապահովելով ներառական միջավայր:

Ներքին հաղորդակցությունն ապահովվում է աստիճանավանդակներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերելակներով: Աստիճանավանդակների, միջանցքների և դռների լուծումները նախագծված են հակահրդեհային պահանջներին համապատասխան՝ ապահովելով անվտանգ շահագործում արտակարգ իրավիճակների դեպքում:

Շենքերի կառուցումը նախատեսվում է միաձույլ երկաթբետոնյա կարկասային համակարգով՝ ապահովելով սեյսմակայունություն և կառուցվածքային հուսալիություն: Արտաքին պատերը նախատեսվում են ջերմամեկուսացված և ժամանակակից երեսապատման նյութերով (տրավերտինե և բազալտե սալիկներ կամ համարժեք լուծումներ), ինչը կապահովի էներգաարդյունավետություն, ջերմային հարմարավետություն և դիմակայություն արտաքին մթնոլորտային ազդեցություններին: Ֆասադային լուծումները ընտրված են համահունչ գունային և նյութական համադրություններով՝ ներդաշնակ ինտեգրվելով շրջակա միջավայրին:

Քոլեջի համալիրում նախատեսվում են ինժեներական բոլոր անհրաժեշտ համակարգերը՝ ջեռուցում, օդափոխություն և օդափոխության տեղային համակարգեր, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում և կոյուղի՝ գործող նորմատիվ պահանջներին համապատասխան: Կաթսայատունը և էլեկտրական ենթակայանը նախատեսված են որպես առանձին մասնաշենքեր՝ ապահովելով համալիրի անխափան շահագործումը:

Տարածքում նախատեսվում է արտաքին բարեկարգում՝ ներառյալ ներքին ճանապարհների և անցուղիների կառուցում, ասֆալտապատում, բազալտե եզրաքարերի տեղադրում, ինչպես նաև կանաչապատում՝ ծառերով, թփերով և սիզամարգերով: Կձևավորվեն հանգստի և գործնական ուսուցման բաց տարածքներ, ինչպես նաև ապահովվելու է հրշեջ տեխնիկայի ազատ մոտեցումը բոլոր հիմնական շինություններին:

Շենքերի տանիքները նախագծվում են համապատասխան ֆունկցիոնալ լուծումներով՝ ապահովելով ջրահեռացում և տեխնիկական սպասարկման հնարավորություններ: Առանձին մասնաշենքերի համար կիրառվում են ինչպես հարթ, այնպես էլ թեք տանիքային լուծումներ՝ պայմանավորված դրանց գործառույթներով:

Նախատեսվող գործունեության իրականացումը միտված է ժամանակակից, անվտանգ և գործնական ուղղվածությամբ կրթական միջավայրի ստեղծմանը՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի և հարակից տարածքների վրա



հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կվերահսկվեն և կկարգավորվեն սույն հաշվետվության համապատասխան բաժիններում ներկայացված միջոցառումների միջոցով:

6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Ընդհանուր տեխնիկական ցուցանիշներ

Անվանումը	Կառուցապատման մակերեսը / մ ²	Ընդհանուր մակերեսը / մ ²
Վարչական մասնաշենք	201.6	201.6
Ուսումնական մասնաշենք	1368.0	3117.5
Մարզադահլիճի մասնաշենք	892.0	892.0
Արհեստանոց	293.4	293.4
Խելացի գոմեր	204.6	204.6
Ջերմոցային տնտեսություն	264.5	264.5
Տրանսպորտային միջոցների պահպանման տարածք	269.8	269.8
Կաթսայատուն	43.50	43.50
Էլ. ենթակայան	49.80	49.80
Պահակակետ	28.10	28.10
Ճաշարանի և գրադարանի մասնաշենք	314.5	314.5
Ընդհանուր հողատարածքի մակերես	13454.0	13454.0
Ընդհանուր կառուցապատման մակերես	3746.2	3746.2
Ընդհանուր կանաչապատման մակերես	2970.0	2970.0

Մասնաշենք 2.3.11 «Քոլեջի ուսումնական մասնաշենք»



Քոլեջի շենքը իրենից ներկայացնում է պեաձև, երկհարկանի շինություն:

- Առանցքային չափերն են - 99600x55900
- Կառուցապատման մակերեսը - 2574.5 մ²/
- Հարկի բարձրությունը - 4.5 մ
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 886.30

Նախագծում նախատեսվել են բոլոր նորմատիվային սենքերը և սենյակները:

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով: Տանիքը հարթ է, կազմակերպված ջրահեռացմամբ:

Արտաքին պատերի համար նախատեսված է ջերմամեկուսացում և երեսապատում՝ տրավերտինե և բազալտե սալիկներով:

Հատակները ուսումնական սենքերում իրականացվել են վինիլով՝ 2 մմ հաստությամբ, սանհանգույցներում՝ խեցեսալով, միջանցքներում մամլոգրանիտով: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Սանհանգույցներում պատերը երեսապատել հախճասալերով h=2.8 մ: Առաստաղները լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով, Ֆոե-միջանցքում Արմաթրոնգ տեսակի, սանհանգույցներում՝ ՊՎՔ տեսակի պլաստմասե:

Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Դռները մետաղապլաստե սպիտակ գույնի պրոֆիլներով դռներ: Արտաքին դռները այլումինե մոխրագույն: Բոլոր աստիճանների համար նախատեսվել են բազալտե երեսապատում և մետաղական բազրիքներ: Թեքահարթակների համար այլումինե դեկորատիվ բռնաձող:

Մարզադահլիճի տանիքը նախատեսվել է մետաղական ֆերմաների վրա սենդվիչ պանելներով 120 մմ հաստությամբ:

Մասնաշենք 4 «Արհեստանոց»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 25600x10400
- Կառուցապատման մակերեսը - 293.4 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 887.30

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով, տանիքը՝ փայտածպեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ:



Հատակը՝ Մամլոգրանիտե: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Առաստաղը լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Արտաքին դուռը այլումինե մոխրագույն:

Մասնաշենք 5 «Խելացի գոմեր»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 19500x9050
- Կառուցապատման մակերեսը - 204.6 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 885.35

Մասնաշենք 6 «Ջերմոցային տնտեսություն»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 17000x14000
- Կառուցապատման մակերեսը - 284.5 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 885.35

Մասնաշենք 7 «Տրանսպորտային միջոցների պահպանման տարածք»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 23600x10400
- Կառուցապատման մակերեսը - 269.8 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 886.15

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով, տանիքը՝ փայտածալեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ :

Հատակը՝ խճանկար 40 մմ հաստությամբ: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Առաստաղը լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Արտաքին դուռը այլումինե մոխրագույն :

Մասնաշենք 8 «Կաթսայատուն»

Կաթսայատան շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:



- Առանցքային չափերն են - 6400x5800
- Կառուցապատման մակերեսը - 43.5 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 885.35

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով, տանիքը՝ փայտածալեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ :

Հատակը՝ խճանկար 40 մմ հաստությամբ: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Առաստաղը լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Արտաքին դուռը այլումինե մոխրագույն:

Մասնաշենք 9 «Էլ. ենթակայան»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 7200x5600
- Կառուցապատման մակերեսը - 49.8 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 885.35

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով, տանիքը՝ փայտածալեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ:

Հատակը՝ խճանկար 40 մմ հաստությամբ: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Առաստաղը լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Արտաքին դուռը այլումինե մոխրագույն:

Մասնաշենք 10 «Պահակակետ»

Շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև, միահարկ շինություն:

- Առանցքային չափերն են - 5400x3900
- Կառուցապատման մակերեսը - 28.1 մ²/
- Որպես 0.000 նիշ ընտրված է - 887.85

Շենքը նախագծվել է միաձույլ երկաթբետոնյա կարկասով, տանիքը՝ փայտածալեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ :

Հատակը՝ խճանկար մամլոգրանիտե, սանհանգույցներում խեղեասլե հաստությամբ: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Առաստաղը լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով:



Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Արտաքին դուռը պլուսինե մոխրագույն:

Նախատեսվել է արտաքին բարեկարգում, ճանապարհների ասֆալտապատմամբ, բազալտե եզրաքարերի տեղադրումով և կանաչապատում:

Նախագիծը իրականացվել է ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների համաձայն:

Ճաշարանի և գրադարանի մասնաշենք

Նոր կառուցվող ճաշարանի և գրադարանի մասնաշենքի մակերեսը կազմում է 314.5 մ²:

Քանդման աշխատանքներ

Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում նախատեսված են քանդման/ապամոնտաժման աշխատանքներ, որոնք իրականացվելու են մեխանիկական եղանակով: Պայթեցման աշխատանքներ նախատեսված չեն: Ըստ նախագծի՝ քանդման ենթակա են 14 շենք – 1515.8 մ² ընդհանուր մակերեսով:





Կաթսայատուն

Նոյեմբերյանի քոլեջի կաթսայատան աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի հիման վրա, համաձայն (ՀՈՒՍ II-35-76): Կաթսայատունը կառուցվում է քոլեջի տարածքում նախագծով նախատեսված տեղում: Ընտրված է 2 հատ կաթսաներ յուրաքանչյուրը $Q_{\text{ջ.}}=408500\text{կկալ/ժ}$ ջերմարտադրողությամբ: Ընտրված կաթսաները արտասահմանյան արտադրության են յուրաքանչյուրը՝ $N=475\text{կվտ}$ ջերմային հզորությամբ: Ջերմատարը ջուր է $T_1 - T_2=800 - 600\text{C}$: Որպես հիմնական վառելիք ընդունված է բնական գազ:

Նախագծվող կաթսայատունը սպասարկում է ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգը:

Կաթսայատանը նախատեսված է ավտոմատացված 2 հատ ջրատաքացուցիչ կաթսաներով՝ 475կվտ ջերմարտադրողականությամբ: Կաթսայատան գազի ծախսը կազմում է՝ $B = Q/800 \cdot 0.9 = 817000/800 \cdot 0.9 = 113.0\text{մ}^3/\text{ժամ}$:

Արտածվող օդի ծավալը՝

Օդափոխիչ օդատարի կենդանի կտրվածքը կլինի $V_{\text{ա}} = V_{\text{կ}} \cdot 3\text{մ}^3/\text{ժամ} = 130 \cdot 3 = 390\text{մ}^3/\text{ժամ}$ $F = V/3600 \cdot W = 390/3600 \cdot 1.0 = 0.11\text{մ}^3$

Օդի արտածման համար նախատեսվում է 1 հատ դեֆլեկտոր $d=400$; $T-20$ Ներածվող օդի քանակությունը կլինի $V_{\text{ներ}} = V_{\text{այր}} + V_{\text{ա}} = 2085\text{մ}^3$

Օդի ներածման համար նախատեսվում է ժայուղային ցանց՝ $F_{\text{ժ.ց.}} = V_{\text{ներ}}/3600 \cdot 0.7 = 0.82\text{մ}^2$

Տեղադրման համար ընդունում ենք մետաղական ժայուղային ցանց՝ չափ $900 \times 450 / 2$ հատ /:

Տվյալ նախագծի ծավալներում ընդգրկված են՝

- շենքի ներքին ուժային և լուսավորության ցանց
- մուտքային սարքավորում
- ուժային վահան

Տրանսֆորմատորային ենթակայանի 0.4ԿՎ լարման վահանից դեպի կաթսայատան վահան ներանցվում են երկու կաբել: Գծերը նախատեսված են երեք լար միաֆազ և հինգ լարով եռաֆազ: Խմբային ցանցերը նախագծված են պղնձե մալուխներով, անցկացված մետաղական խողովակների միջով հատակի երեսասվաղի



տակ, մետաղական խողովակներից դեպի սպառիչ իրականացվում է մետաղական ճկախողովակներով: Նախատեսված է բանվորական և վերանորոգման լուսավորություն: Կաթսայատան լուսավորությունը նախատեսված է պաշտպանված լուսադիոդային լուսատուներով: Էլ. հոսանքի վնասվածքներից պաշտպանվելու համար նախատեսված է անցկացնել ներքին կոնտուր:

Էլեկտրականություն

Արտաքին լուսավորության ցանցերի մոնտաժային աշխատանքների համար՝ համաձայն ճարտարապետա-շինարարական լուծումների, բոլոր տեխնիկական առաջադրանքների, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքների, և էլեկտրոտեխնիկական կանոնակարգի, ՀՀՇՆ 22-03-2017 -ի հիման վրա:

Ելնելով էլեկտրական բեռնվածքի հաշվարկի համար տրված տվյալներից՝ սնուցող էլ.վահանակների դրվածքային հզորությունը հեռանկարում կկազմի եռաֆազ 10 կՎտ: Էլեկտրաէներգիայի բաշխումը կատարվում է Կառավարման վահանակից, Կառավարման վահանակի մեջ տեղադրվում են եռաֆուտ ավտոմատ անջատիչները, հողանցման և զրոյական կոնտուրները:

Արտաքին լուսավորության սնող մալուխները կառուցել ՎՎԳ 5*6 մմ տիպի մալուխով, իսկ լուսատուների սնող մալուխը ՎՎԳ 3*1.5մմ մալուխով:


Լուսարձակները տեղադրվում են պատի վրա ամվող տարածքով, իսկ այգու հատվածքում Բոլոր մալուխները անցնում են խրամուղով, պահպանելով հեռավորությունը կապի, ջրագծի, գազատարի հետ առնվազն 50 սմ հեռավորության վրա:

Հենասյան և լուսատուի հողանցումը պետք է իրականացվի համաձայն էլեկտրասարքավորումների մոնտաժման գործող կանոնների (ՈՄԾ-ի) 6.1.45 կետի:

Լուսավորության հաշվարկները կատարվել են 7.7KLM 4K T4 70Վտ, 7700լմ լուսատվությամբ, 4000Կ գունային ջերմաստիճանով, IP66 պատյանի պաշտպանության աստիճանով, 220-240Վ աշխատանքային լարմամբ լուսատուի համար: Լուսատուի երաշխիքային ժամկետը 5 տարի է, կյանքի տևողությունը 100000ժ տեխնիկական տվյալներով լուսատուի համար: Կոմպլեկտ կառավարման վահանի մեջ տեղադրված է ժամացույց , որը հնարավորություն կտա կառավարել լուսատուների միացումը և անջատումը: Սնող մալուխը կառուցել խրամուղով, որի կտրվածքը ներկայացված է գծագրում: Բոլոր բետոնե հիմքերը հողացել, էլեկտրոդ և շերտապողպատով:



Որպես պաշտպանիչ միջոցներ հարկավոր է կառուցել հողանցման ցանց:



Հրդեհային անվտանգություն

Ավտոմատ հրդեհային և ազդարարման նախագիծը կատարված է գոյություն ունեցող հրդեհային տեխնիկայի նորմերի և կանոնների / հծՌԿ 2.04.09-84, հծՀԸ II-8.04.02-2005/ և տեխնիկական միջոցների ընտրման և կիրառման առաջարկների հիման վրա: Ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկվող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայություն տեղեկացման համար:

Ջեռուցում և օդափոխություն

Ջեռուցման և օդափոխության աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի և ճարտարապետական շինարարական գծագրերի հիման վրա, համաձայն գործող նորմերի և կանոնների: 1.ՇԻ II 7.01-96.- «Շինարարական կլիմատոլոգիա» 2.ՇԻ II .9-70.- «Հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ» 3.ՇԻ IV7.01-96.-«Ջեռուցում օդափոխություն և օդի լավորակում» Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակաշրջանի հանար՝ tա=-17°С. Ջերմության աղբյուր է հանդիսանում տարածքում



նախագծվող կաթսայատունը: Ձերմատարը ջուր է՝ T1 -T2 =80-60՝c. պարամետրերով: Ձեռուցման համակարգը երկխողովականի է ներքին մատակարարումով, համընթաց շարժմամբ: Մատակարարող և հետադարձ ջերմատարները նախատեսված է անցկացնել առաջին հարկի հատակի տակով: Որպես ջեռուցման սարքեր ընտրված են արտասահմանյան արտադրության այլումինե ջեռուցման մարտկոցներ (H=500մմ):

Ձեռուցման համակարգը իրականացնել պոլիպրոպիլենե խողովակներով: Ձեռուցման մարտկոցներին մոտեցող խողովակների վրա տեղադրել ձեռքով կարգավորվող (վերևի, ներքևի) և օդահեռացման փականներ:

ՕԴԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ - Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ: Բոլոր սան. հանգույցներից օդի արտածումը կատարվում է մասամբ բնական, մասամբ էլ օդամուղների օգնությամբ: Բնական օդափոխության բոլոր օդատարները հանվում են տանիքից 1.2 մ բարձրության վրա:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման ցանց

Քոլեջի համալիրը ջրով ապահովվելու համար համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ միացումը իրականացնել տարածքից մոտ 115 մետր հեռավորությամբ անցնող փ160մմ ջրագծից փ110մմ խողովակով: Միացման կետում նախատեսվում է փ1500 փականային հոր, որում կատարվում է գոտի միացում փ110x160,որից հետո տեղադրվում է Փ100 սողնակ կցաշուրթով, նույն գծի վրա նախատեսվում է Փ1500մմ դիտահորում հակահրդեհային հիդրանտ: Քոլեջի համալիրի պարիսպին հարող մասում նախատեսվում է Փ1500 հոր, որում Փ80 սողնակ, ջրաչափ էվ ֆիլտր: Քոլեջի ներբակային սառը և տաք ջրամատակարարման ցանցը նախատեսված է Փ110-20մմ պոլիէթիլենե խողովակներով: Ցանցերի վրա նախատեսված են բաժանարար դիտահորեր, իրենց համապատասխան փականներով էվ սողնակներով: Փ110մմ խողովակով ջուրը հասցվում է նախագծային կաթսայատուն և ջեռուցման ցանցի միջոցով, տաք ջրամատակարարման և շրջապտույտի խողովակների հետ միասին ցանցերը հասցվում են մարզադահլիճ, քոլեջ և ճաշարան-գրադարան մասնաշենքերին, իսկ մյուս կառույցների ջրամատակարարումը կատարվում է ներբակային ջրամատակարարման ցանցից համապատասխան տրամագծերով:

Ջրահեռացման ցանց

Քոլեջի համալիրի կառույցներից կեղտաջրերը ինքնահոս հավաքվում են



ներբակային ցանցի միջոցով 2 ուղղություններով միացվում են տարածքում նախատեսվող սեպտիկ հորին, քանի որ համալիրի հարող տարածքներում բացակայում է կեղտաջրերի հեռացման ցանց: Ցանցերի համար նախատեսված են պոլիէթիլենե ծալքավոր խողովակներ $\Phi 150:200$ մմ սեպտիկ հորերի համար նախատեսված է նախագծային ե/բ կառույց: Ջրահեռացման ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր, միացումների անկյունների եվ համապատասխան նորմատիվային հեռավորությունների վրա ատուգումներ կատարելու եվ հետագա շահագործման համար:


Սույն Ծրագրի իրականացման շրջանակներում բիոզուգարանների տեղադրման անհրաժեշտություն չի դիտարկվում, քանի որ բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները կազմակերպվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներով:

Ծրագրի իրականացումը նախատեսվում է գործող քոլեջի տարածքում, որտեղ առկա են բոլոր ենթակառուցվածքները:

Անձրևաջրերի հեռացման ցանց

Մարզադահլիճի, քոլեջի և ճաշարան-գրադարանի մասնաշենքերի հարթ տանիքներից, անձրեվաջրերը ներքին ցանցերի միջոցով ջրերը հեռացվում են բակային տարածք, որտեղ նախատեսվում են դրենաժային $\Phi 1500$ դիտահորեր, որոնց մեջ լցվում է միջին խտության խճի լցոն: Ցանցերի համար նախատեսված են $\Phi 150$ մմ խողովակներ: Իսկ մյուս կառույցների անձրևաջրերը արտաքին ջրհորդանների միջոցով հեռացվում են ազատ ելքով մակերեկույթի վրա:

Պատկեր 9: Հատակագծեր



Կառուցման աշխատանքների ընթացքում (նախքան հիդրանտ տեղադրելը) Կառուցապատողին առաջարկվում է խորհրդակցել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության հետ՝ կառուցվող հիդրանտի գլխիկը հրշեջ մեքենաների ջրընդունիչ սարքերի հետ համապատասխանեցնելու նպատակով:


Նախատեսվող Ծրագրի իրականացման շրջանակներում օգտագործվելու են հետևյալ տիպի մեքենա-մեխանիզմները՝

- Էքսկավատոր
- Բետոնե խառնիչ
- Ավտոմոբիլային կոունկ KC-35715-1
- Ավտոինքնաթափ (KAMA3) 65115

Նախատեսվող մեքենա-մեխանիզմները ըստ հնարավորության հագեցած են լինելու ժամանակակից աղմկակլանիչ սարքավորումներով, ինչպես նաև աշխատելու են հստակ սահմանված աշխ. գրաֆիկով՝ հնարավոր աղմուկի և փոշու ազդեցությունների կանխարգելման նպատակով: Հաշվի առնելով Ծրագրի ոչ շատ մեծ ծավալները, ինչպես նաև նախատեսվող մեքենա-մեխանիզմների քանակությունը հնարավոր աղմուկի և փոշու ազդեցությունները կլինեն ժամանակավոր և ոչ զգալի:



Անիվների լվացման հարթակների քանակի և տեղադիրքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝



Ծրագրի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլ մանրամասները ներակայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժիններում:

6.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող Ծրագրի իրականացման (կառուցման) աշխատանքները կտևեն մոտ 2-3 տարի:

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքը վերաբերում է այն սցենարին, երբ Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցումը չի իրականացվում: Այս սցենարի դեպքում՝



- Տարածքում չեն իրականացվի նախատեսված կառուցապատման և բարեկարգման աշխատանքները, ինչի արդյունքում կպահպանվի առկա վիճակը՝ առանց ժամանակակից կրթական և արտադրական ենթակառուցվածքների ձևավորման:
- Մասնագիտական կրթության նկատմամբ առկա և աճող պահանջարկը կմնա չբավարարված՝ սահմանափակելով երիտասարդների համար որակյալ կրթություն ստանալու և մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները տարածաշրջանում:
- Կշարունակվի տարածաշրջանում մասնագիտական կրթական ենթակառուցվածքների պակասը, ինչը կարող է հանգեցնել աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանող մասնագետների պակասի և երիտասարդների արտահոսքի:
- Չիրացված կմնան գործնական և կիրառական կրթության զարգացման հնարավորությունները, ներառյալ ժամանակակից ուսումնական և արտադրական հարթակների (արհեստանոցներ, ջերմոցային տնտեսություն, «խելացի գոմեր» և այլն) ստեղծումը:
- Չեն ստեղծվի նոր աշխատատեղեր ինչպես շինարարության, այնպես էլ քոլեջի հետագա շահագործման փուլում, ինչը բացասաբար կանդրադառնա համայնքի սոցիալ-տնտեսական ակտիվության վրա:
- Չիրացված կմնա Նոյեմբերյան համայնքի սոցիալական և կրթական զարգացման կարևոր ներուժը, այդ թվում՝ մարդկային կապիտալի ձևավորման և տեղական տնտեսության ամրապնդման հնարավորությունները:

Ուստի, «ոչ մի գործողություն» այլընտրանքը չի դիտարկվում որպես կենսունակ և նպատակահարմար տարբերակ, քանի որ այն հակասում է մասնագիտական կրթության զարգացման պետական քաղաքականությանը, ինչպես նաև Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններին:

7.2. Ծրագրի առավելությունները

Առաջարկվող տարբերակը ենթադրում է Նոյեմբերյանի պետական քոլեջի կառուցում, որն ունի մի շարք առավելություններ՝ ինչպես տեղական համայնքի, այնպես էլ Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մասնավորապես՝

- **Գործնական կրթության և հմտությունների զարգացման խթանում՝** արհեստանոցների, ջերմոցային տնտեսության, «խելացի գոմերի» և այլ արտադրական հարթակների առկայությունը հնարավորություն կտա ուսանողներին ձեռք բերել կիրառական հմտություններ՝ բարձրացնելով



նրանց մրցունակությունը աշխատաշուկայում:

- **Անվտանգության և առողջության ապահովում**՝ արհեստանոցների, ջերմոցային տնտեսության, «խելացի գոմերի» և այլ արտադրական հարթակների առկայությունը հնարավորություն կտա ուսանողներին ձեռք բերել կիրառական հմտություններ՝ բարձրացնելով նրանց մրցունակությունը աշխատաշուկայում:
- **Անվտանգության և առողջության ապահովում**՝ շենքերը նախագծված են սեյսմակայունության, հրդեհային անվտանգության, աշխատանքի անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներին համապատասխան՝ ապահովելով անվտանգ և առողջ կրթական միջավայր ուսանողների և աշխատակազմի համար:
- **Սոցիալական նշանակության բարձրացում**՝ քոլեջի կառուցումը կնպաստի մասնագիտական կրթության հասանելիության ընդլայնմանը, հատկապես սահմանամերձ տարածաշրջաններում, և երիտասարդների համար նոր կրթական և մասնագիտական հնարավորությունների ստեղծմանը:
- **Քաղաքաշինական միջավայրի բարելավում**՝ քոլեջի համալիրի կառուցումը և տարածքի բարեկարգումը կնպաստեն Նոյեմբերյան քաղաքի տվյալ հատվածի զարգացմանը՝ ձևավորելով ժամանակակից կրթական և արտադրական նշանակության կենտրոն:
- **Տնտեսական և սոցիալական ազդեցություն**՝ շինարարական փուլում և հետագա շահագործման ընթացքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, իսկ կրթական ենթակառուցվածքի զարգացումը երկարաժամկետ դրական ազդեցություն կունենա տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ակտիվության վրա:
- **Մարդկային կապիտալի զարգացում և տեղական տնտեսության աջակցում**՝ քոլեջը կնպաստի տեղական աշխատուժի որակավորման բարձրացմանը՝ ապահովելով մասնագետների պատրաստում, որոնք կարող են ներգրավվել տարածաշրջանի տնտեսության տարբեր ոլորտներում:

Բացի այդ, ծրագրի իրականացման ընթացքում կիրականացվեն շրջակա միջավայրի պահպանությանը միտված միջոցառումներ՝ ուղղված շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղմուկի, փոշու, թափոնների և ժամանակավոր անհարմարությունների նվազեցմանը: Նախատեսվում է նաև առավելագույնս ներգրավել տեղական աշխատուժ, ինչը կնպաստի համայնքի մասնակցությանը, ծրագրի սոցիալական ընդունելիության բարձրացմանը և տեղական տնտեսական ակտիվության խթանմանը:



8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

8.1. Ջուր.

Տեղում առկա են բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ջրագիծը և կոյուղատարը: Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը, «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կկնքի պայմանագիր:

Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 "Внутренний водопровод и канализация зданий", նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – առավելագույնը 36 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2, \text{ որտեղ}$$

n – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

N – ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ³օր/մարդ

T_1 – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 792,

n_1 –բանվորների թվաքանակն է (օրական)- 127 մարդ,

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ³օր/մարդ,

T_2 - աշխատանքային օրերի թիվն է - 792.

$$W_{\text{խ.տ.}} = 20 \times 0.016 \text{ մ}^3 \times 792 + 127 \times 0.025 \text{ մ}^3 \times 792 = 8237 \text{ մ}^3/\text{շին}, 3.5 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ջրի ծախսը տրանսպորտային միջոցների անիվների լվացման համար

Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է մեկ կամ երկու մեքենա: Տեղադրվելու են 2 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 120 լ/հատ:

$$Q_2 = 120 \times 2 \times 2 = 480 \text{ լ կամ } 0.48 \text{ մ}^3/\text{օր}$$

$$\text{Շին.ընթացքում՝ } 0.48 \text{ մ}^3/\text{օր} \times 792 \text{ օր} = 380 \text{ մ}^3/\text{շին}$$

Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T,$$

Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 2500 մ²,

K - ջրցանման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տար և չոր եղանակի/ օրերը, 170 օր/տարի կամ 510 օր/շին:

Այսպիսով՝

$$V_1 = 2500 \times 0.0015 \times 510 = 1912.5 \text{ մ}^3/\text{շին}:$$



Միջին օրեկանը կազմում է 3.75մ³:

Ջրցանը իրականացվելու է ջրցան մեքենայի միջոցով, իսկ հնարավորության դեպքում կտեղադրվեն ջրշաղ սարքեր:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝
8237 + 380 + 1912.5 = 10529.5 մ³/շին:

Արտահոսք.

Ջրցանը արդյունքում արտահոսք չի առաջանում:

Անիվների լվացման ընթացքում ջրի կորուստը կազմում 10 տոկոս, այստեղից արտահոսքը կկազմի՝ $380 \times (1 - 0.1) = 342$ մ³/շին:

Կենցաղային ջրօգտագործման կորուստները կազմում են 5 տոկոս, այստեղից՝
 $8237 \times (1 - 0.05) = 7825$ մ³/շին:

Ընդամենը արտահոսքը կկազմի՝ $342 + 7825 = 8167$ մ³/շին:

Տարածքի բոլոր կեղտաջրերը կհավաքվեն մեկ ցանցի մեջ և կմիանան գործող կոյուղատարին:

8.2. Հողային աշխատանքներ

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հողային աշխատանքներ: Հանված նյութերը կդասակարգվեն և կպահվեն տարածքում նախատեսված համապատասխան վայրերում, իսկ ոչ պիտանի հանույթը կտեղափոկվի Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից տրամադրված աղբավայր՝ համապատասխան երթուղիներով:

8.3. Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և



անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

9.1.1. Օդային ավազան.

Նոյեմբերյանի պետական քոլեջի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Շինությունների քանդման աշխատանքների ընթացքում առաջացող փոշի

Շինությունների քանդման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ տ/ժամ (քանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է քանդվածքում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.2

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - քանդված զանգվածի քանակը՝ 1840 մ³, կամ 3312 տ:

Քանդման աշխատանքները իրականացվելու են 2 ամիս, կամ 44 օր:

$G = 3312 \text{ տ} : 44 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 9.4 \text{ տ/ժամ}:$

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.6 \times 0.2 \times 9.4 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.157 \text{ գ /վրկ}:$

Արտանետումների քանակը քանդման աշխատանքների արդյունքում կկազմի՝ 0.157 գ/վրկ x 44 օր x 8 ժամ x 3600վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 0.20 տ:

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

բ) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների



հաշվարկը նույնպես կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ (քանաձև 1), որտեղ}$$

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - հանվող գրունտի և հողի քանակը՝ 5600 մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ 10060 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 2 – 3 տարի, որից հողային աշխատանքները՝ 6 ամիս, կամ 132 օր:

$$G = 10060 \text{ տ} : 132 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 9.5 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 9.5 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.21 \text{ գ /վրկ:}$$

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

$$0.21 \text{ գ/վրկ} \times 132 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1\ 000\ 000 \text{ գ/տ} = 0.8 \text{ տ:}$$

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացում:

գ) Վառելանյութի օգտագործումը

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 60 - 70 լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 51480 լ կամ 43.8 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզելային վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են



«Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա (սույն մեթոդական համակարգը հիմնված է ԵՄ CORINEIR գործակիցների հիման վրա):

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 13: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑՕՄ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 15-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 14: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին. ժամանակ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	1.59
	Ածխաջրածիններ	8.403	0.37
	NO _x	42.422	1.86
	Մուր	4.3	0.19

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \Sigma k_s b, \text{ որտեղ }`$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 43.8 տ/շին. ժամանակ:

$$SO_2 = 2 \times 43.8 \times 0.002 = 0.17 \text{ տ:}$$

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 15: Շինարարության փուլի արտանետումները

N	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումը, տ/շին. ժամանակ
1	Անօրգանական փոշի	6.543
2	Ածխածնի օքսիդ	1.59
3	Ածխաջրածաններ	0.37



4	Ազոտի երկօքսիդ	1.86
5	Սուր	0.19
6	Ծծմբային անհիդրիդ	0.17

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

Բացի փոշու մոնիթորինգից անհրաժեշտ է լինելու նաև իրականացնել փոշեկլանիչ ցանցապատում / թաղանթապատում մինչև 4մ բարձրությանմբ հատկապես տարածքի այն մասում, որտեղ անմիջական հարևանությամբ առկա են շենք-շինություններ՝ օգտոտգործվող հասարակական նպատակներով («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան): Անհրաժեշտության դեպքում փոշեկլանիչ ցանցապատման / թաղանթապատման բարձրությունը կարող է փոփոխվել՝ ըստ պահանջի: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

Ի լրումն վերոնշյալի, ստորև ներկայացված են ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնք պետք է պահպանվեն շինարարական աշխատանքների ընթացքում: Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվաղողերը լվանալ,

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական



հրապարակի սահմաններից դուրս,

ե) հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

զ) սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

Ծրագրի իրականացման շրջանակներում կազմակերպվելու են փոշենստեցման և փոշեճնշման միջոցառումներ համաձայն «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-ն ու Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 07-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի նախագահի 15 հունվարի 2026թ.-ի հրամանի:

9.1.2. Ջրային ավազան

Քոլեջի համալիրը ջրով ապահովվելու համար համաձայն «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ միացումը իրականացնել տարածքից մոտ 115 մետր հեռավորությամբ անցնող փ160մմ ջրագծից փ110մմ խողովակով:

Քոլեջի համալիրի կառույցներից կեղտաջրերը ինքնահոս հավաքվում են ներբակային ցանցի միջոցով 2 ուղղություններով միացվում են տարածքում



նախատեսվող սեպտիկ հորին, քանի որ համալիրի հարող տարածքներում բացակայում է կեղտաջրերի հեռացման ցանց:

Մանրամասները ներկայացված են սույն Հաշվետվության 6-րդ Բաժնում:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում:

Այլ ազդեցություններ ջրային ռեսուրսների վրա շինարարության ընթացքում չի նախատեսվում:

9.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող մի քանի տեսակի թափոններից երկուսը կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝

«Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ծածակագիրը՝ 9120040001004/՝ 691.2 մ³, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

«Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ» /ծածակագիրը՝ 9120060101004/՝ 2880 մ³, ըստ առաջացման կտեղափոխվի Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

«Փորման աշխատանքների արդյունքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» /ծածակագիրը՝ 3140110008995/:

«Շինարարական աղյուսի ջարդոն» /ծածակագիրը՝ 3140140101995/:

«Հողային հանվածքներ», ծածկագիրը՝ 3140110101005, ընդհանուր ծավալը՝ 5600 մ³, կօգտագործվի որպես ետլիժք, մնացորդը՝ տարածքների հարթեցման համար: Հողի բերրի շերտի (հզորությունը՝ 0.4 – 0.5 սմ) ծավալը կկազմի 850 մ³, որը օգտագործվելու է որպես ետլիժք և տարածքի բարեկարգման համար:

Բացի վերոնշյալներից, շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական հետևյալ տեսակի թափոններ՝



- ջերմամեկուսիչ նյութեր,
- եռակցման խարամ,
- սև և գունավոր մետաղներ,
- հղկման արդյունքում առաջացած կտորներ
- և այլն

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների կուտակումը տարածքում:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա:

9.1.4. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության ընթացքում հանվելու է մոտ 5600մ³ հողային զանգված, կօգտագործվի որպես ետլիծք, մնացորդը՝ տարածքների հարթեցման համար:

9.1.5. Կենսաբազմազանություն

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքում չկան վայրի բուսատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում բացասական ազդեցության կենսաբազմազանության վրա չի նախատեսվում, քանի որ տարածքը երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության և այնտեղ կենսաբազմազանությունը գործնականում բացակայում է: Տեղամասի առկա վնասված և չորացած ծառերը կհատվեն և Ծրագրի իրականացման շրջանակներում կիրականացվի կանաչապատում, ինչը դիտարկվում է նշված և հարակից տարածքների համար որպես դրական ազդեցություն:

Ըստ հետազոտությունների, ներկայացված գործունեության իրականացման համար նախատեսված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացվող տարածքը երկար տարիներ ենթարկվել է մարդածին ազդեցության:



Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ներկայացված գործունեությունը չի կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտի վրա, քանի որ տարածքում և դրա հարևանությամբ նմանատիպ օբյեկտներ չկան:

9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Ազդեցության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը և նախատեսված մեղմացնող միջոցառումները, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:



9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը հիմնականում ցածր է, սակայն քանի որ տեղանքը գտնվում է բնակելի մարդաշատ տեղամասում և ճանապարհի հարևանությամբ, այդ հատվածում աղմուկի մակարդակը գնահատվում է որպես միջին-բարձր (հիմնականում՝ ավտոտրանսպորտային միջոցներ):

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (զլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը, աշխատակիցների և բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ կան մի քանի բնակելի և հասարակական շենք-շինություններ, որոնց վրա բացասական ազդեցությունները կանխելու նպատակով պետք է իրականացվեն աղմուկի նվազեցմանն ուղղված մեղամացնող միջոցառումներ: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ)



նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությաննների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
